



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌԻ ԽԱՐԶՊԵՏԱՐԱՆ

✉ ք. Վանաձոր, Հայքի Հրապարակ 1
Էլ հասցև՝ marzpet.lori@mta.gov.am

☎ (+374 322) 4-61-92
Ֆաքս՝ (+374 322) 2-28-77

թիվ _____

« ____ » _____ 2016թ.

ԻԱԿ ՆԱԽԱԳԱՀ
ՏԻԿԻՆԼ.ԴՈՅԴՈՅԱՆԻՆ
Էլ.փոստ foi@foi.am

Ի պատասխան 17.05.16 թ. թիվ 077/7184 գրության.

Հարգելի տիկին Դոյդոյան

1-ին կետի վերաբերյալ հայտնում եմ, որ ՀՀ Լոռու մարզպետի կողմից 04.02.2014թ. թիվ 30-Ն որոշմամբ հաստատվել է «ՀՀ Լոռու մարզպետարանի աշխատակազմի ներքին գործավարության կարգը», որը պետական գրանցում է ստացել ՀՀ Արդարադատության նախարարությունում: Լոռու մարզպետարանի աշխատակազմում ներքին գործավարությունը իրականացվում է նշված կարգի համաձայն էլեկտրոնային փաստաթղթաշրջանառության «Mulberry» համակարգով: Համաձայն կարգի 2-րդ գլխի և 7-րդ գլխի պահանջների՝ ՀՀ Լոռու մարզպետարան մուտքագրվող փաստաթղթերը, այդ թվում և տեղեկատվական հարցումները (առցանց և առձեռն, ինչպես նաև էլեկտրոնային փոստով ստացվող) մուտքագրվում են էլեկտրոնային համակարգ և դրանց ընթացք է տրվում սահմանված կարգին համապատասխան՝ պահպանելով ՀՀ Օրենսդրության պահանջները:

Դրանք չեն գրանցվում և չեն քննարկվում քաղաքացիների դիմում- բողոքներից առանձին:

2-րդ կետի վերաբերյալ հայտնում եմ, որ տեղեկություն ստանալու հարցումների գրանցման եւ դասակարգման վերաբերյալ կարգը մշակման փուլում է, իսկ վիճակագրության վարման վերաբերյալ տեղեկացնեմ, որ 2016թ-ի ընթացքում առ այսօր ՀՀ Լոռու մարզպետարանի աշխատակազմ է մուտք արվել թվով 5 տեղեկատվական հարցումներ (ներառյալ վերոգրյալը), որոնց սահմանված ժամկետներում և կարգով ընթացք են տրվել և դրանք տեղադրված են մարզպետարանի կայք էջի «Դիմեք մեզ» բաժնի «Տեղեկատվություն ստանալու վերաբերյալ հարցումների տեսություն» ենթաբաժնում:

ՄԱՐԶՊԵՏ

Ա.ՆԱԼԲԱՆԴՅԱՆ